



COVID-19-ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՄ ԹԵՍԱԿՎՈՐՄԱՆ ՊԱՅԱՆՁ Ընդհանուր Ակնարկ Ծածկ Ունեցող Բիզնեսների Համար



Վերջին Թարմացումները. (փոփոխությունները նշված են դեղին գույնով)

9/29/21. Ուժի մեջ է մտնում 2021 թվականի նոյեմբերի 1-ին. Մեզա Միջոցառումների Կազմակերպիչները պետք է ստուգեն 18 տարեկան և ավելի բարձր տարիքի այցելուների ամբողջովին պատվաստման կամ COVID-19-ի վիրուսային թեստի բացասական արդյունքների ապացույցը՝ դրանց տվյալները համեմատելով լուսանկարով նույնականացման քարտի տվյալների հետ:

Արձագանքելով համայնքներում COVID-19-ի տարածմանը և Դելտա ենթատեսակի առկայությանը՝ [Հանրային Առողջության Պատասխանատուի](#) նոր Հրամանը պահանջում է, որ ավելի բարձր վտանգավորությամբ բիզնեսները ձեռնարկեն լրացուցիչ քայլեր՝ իրենց հաճախորդների և աշխատակիցների անվտանգությունն ապահովելու համար, ներառյալ պատվաստման կարգավիճակի ստուգումը նախքան հաստատություն մտնելը: Այս բիզնեսներ մուտք գործողների համար պատվաստում պահանջելը կնվազեցնի վիրուսի համայնքային տարածումը, աշխատողների համար վտանգը և կխրախուսի բնակիչներին պատվաստվել: Պատվաստանյութերն անվտանգ և արդյունավետ են, լայնորեն հասանելի են Շրջանում և հանդիսանում են COVID-19-ով հիվանդանալու վտանգը նվազեցնող լավագույն միջոցը:

Վիրուսի Դելտա ենթատեսակը տարածվում է ավելի հեշտությամբ, քան COVID-19 վիրուսի նախկին ենթատեսակները: Ըստ հրապարակված զեկույցների՝ վարակման վտանգը մեծացնող գործոնները, ներառյալ վարակի փոխանցումը ավելի քան 6 ոտնաչափ հեռավորության վրա գտնվող մարդկանց, ներառում են.

- **Անբավարար օդափոխությամբ կամ օդափոխության համակարգի բացակայությամբ փակ տարածքներ**, որոնք թույլ են տալիս արտանետվող շնչառական հեղուկների, հատկապես շատ փոքր կաթիլների և աերոզոլային մասնիկների կուտակումը օդում:
- **Շնչառական հեղուկների առատ արտանետում**, որը կարող է առաջանալ վարակված անձի կողմից ֆիզիկական ուժ գործադրելու կամ ձայնը բարձրացնելու հետևանքով (օրինակ՝ ֆիզիկական վարժություններ կատարելիս, բղավելիս/ վանկարկելիս, երգելիս):
- **Երկարատև ներկայությունն** այսպիսի պայմաններում:

Մեծ միջոցառումները, ինչպիսիք են Մեզա Միջոցառումները, մեծացնում են COVID-19-ի փոխանցման վտանգը, քանի որ ներկա գտնվողները երկար ժամանակ են անցկացնում ֆիզիկապես մոտ գտնվելով մեծաթիվ մարդկանց, որոնց հետ սովորաբար չեն շփվում՝ դրանով իսկ մեծացնելով մասնակիցների միջև COVID-19 պարունակող շնչառական մասնիկների փոխանցման վտանգը: Փակ տարածքներում հաճախորդներին սնունդ և ըմպելիքներ մատուցող բիզնեսները նույնպես համարվում են COVID-19-ի փոխանցման ավելի բարձր վտանգավորության վայրեր, քանի որ ն՝ պատվաստված, և՛ չպատվաստված անձինք երկար ժամանակով գտնվում են փակ տարածքներում՝ հաճախ առանց դիմակների:





Հիմնական Դրույթներ

Ստորև ներկայացված են Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանի թարմացված պահանջները ինչպես Մեզա Միջոցառումների (փակ միջոցառումներ՝ 1000+ մասնակիցներով, կամ բացօթյա միջոցառումներ՝ 10000+ մասնակիցներով) այնպես էլ բարերի, գարեջրատների, գինեգործարանների, օղեգործարանների, գիշերային ակումբների և լաունջերի համար: Նկատի ունեցեք, որ բոլոր հաճախորդներն ու աշխատակիցները պետք է շարունակեն կրել դիմակներ Փակ կամ Բացօթյա Մեզա Միջոցառումների ընթացքում՝ անկախ պատվաստման կարգավիճակից:

- ✓ Մեզա Միջոցառումներ.
 - ✓ Փակ տարածքներում անցկացվող Մեզա Միջոցառումների բոլոր մասնակիցները պետք է նախքան ներս մտնելը ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց կամ (ախտորոշիչ) թեստի արդյունք: Մինչև 2 տարեկան երեխաներն ազատվում են այս պահանջից:
 - ✓ Սկսած 2021 թվականի հոկտեմբերի 7-ից: Բացօթյա Մեզա Միջոցառումներին մասնակցող 12 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձինք պետք է նախքան մուտք գործելը ներկայացնեն COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց կամ (ախտորոշիչ) թեստի բացասական արդյունք: Մինչև 2 տարեկան երեխաներն ազատվում են այս պահանջից:
 - ✓ Սկսած 2021 թվականի նոյեմբերի 1-ից: Մեզա Միջոցառումների Կազմակերպիչներից պահանջվում է ստուգել 18 տարեկան և ավելի բարձր տարիքի այցելուների ամբողջովին պատվաստման կամ COVID-19-ի վիրուսային թեստի բացասական արդյունքների ապացույցը՝ համեմատելով դրանց տվյալները լուսանկարով նույնականացման քարտի (ID) տվյալների հետ (cross-check):
 - ✓ Բանավոր վկայությունն այլևս բավարար չէ պատվաստման կարգավիճակը կամ թեստավորման արդյունքներն ապացուցելու համար:
 - ✓ Քայլ առ քայլ հրահանգների համար տե՛ս [Պատվաստման Հաստատման Ուղեցույցը](#) և [Թեստավորման Հաստատման Ուղեցույցը](#):
- ✓ Բարեր, գարեջրատներ, գինեգործարաններ և օղեգործարաններ.
 - ✓ 2021 թվականի Հոկտեմբերի 7-ից մինչև 2021 թ. Նոյեմբերի 3-ը: Կազմակերպիչները պետք է ստուգեն, որ 12 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր հաճախորդները պատվաստված լինեն COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն մեկ դեղաչափով՝ հաստատություն մուտք գործելու և փակ վայրերում սպասարկվելու համար:
 - ✓ Սկսած նոյեմբերի 4-ից: Կազմակերպիչները պետք է ստուգեն, որ 12 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր հաճախորդները և տեղում աշխատող աշխատակիցները ամբողջովին պատվաստված լինեն՝ հաստատություն մուտք գործելու և փակ վայրերում սպասարկվելու համար: Քայլ առ քայլ հրահանգների համար տե՛ս [Պատվաստման Հաստատման Ուղեցույցը](#):





COVID-19-ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՄ ԹԵՍԱԿՎՈՐՄԱՆ ՊԱՅԱՆՁ Ընդհանուր Ակնարկ Ծածկ Ունեցող Բիզնեսների Համար



- ✓ Պատվաստման ապացույց չներկայացնող հաճախորդները կարող են նստել և սպասարկվել հաստատության բացօթյա հատվածում:
 - Որոշ անձանց, որոնք լավ ծածկող դիմակ են կրում, կարող են թույլատրել ժամանակավորապես մտնել հաստատության փակ տարածք սահմանափակ նպատակներով, ինչպես օրինակ՝ առաքում անելու կամ այնտեղից իրեր տանելու, ծառայություններ մատուցելու կամ վերանորոգման աշխատանքներ կատարելու, արտակարգ իրավիճակների կամ կարգավորող այցի, զուգարանից օգտվելու կամ պատվերը վերցնել-տանելու համար:
- ✓ Գիշերային Ակումբներ և Լաունջեր.
 - ✓ 2021 թվականի Հոկտեմբերի 7-ից մինչև 2021 թ. Նոյեմբերի 3-ը: Կազմակերպիչները պետք է ստուգեն, որ բոլոր հաճախորդները պատվաստված լինեն COVID-19-ի դեմ պատվաստանյութի առնվազն մեկ դեղաչափով՝ հաստատություն մուտք գործելու համար:
 - ✓ Սկսած 2021թ.-ի նոյեմբերի 4-ից: Կազմակերպիչները պետք է ստուգեն, որ բոլոր հաճախորդները և տեղում աշխատող աշխատակիցները ամբողջովին պատվաստված լինեն COVID-19-ի դեմ՝ հաստատություն մուտք գործելու և փակ վայրերում սպասարկվելու համար: Քայլ առ քայլ հրահանգների համար տե՛ս [Պատվաստման Հաստատման Ուղեցույցը](#):
 - ✓ Պատվաստման ապացույց չներկայացնող հաճախորդները կարող են նստել և/կամ սպասարկվել միայն հաստատության բացօթյա հատվածում:
 - Որոշ անձանց, որոնք լավ ծածկող դիմակ են կրում, կարող են թույլատրել ժամանակավորապես մտնել հաստատության փակ տարածք սահմանափակ նպատակներով, ինչպես օրինակ՝ առաքում անելու կամ այնտեղից իրեր տանելու, ծառայություններ մատուցելու կամ վերանորոգման աշխատանքներ կատարելու, արտակարգ իրավիճակների կամ կարգավորող այցի, զուգարանից օգտվելու կամ պատվերը վերցնել-տանելու համար:

Բացի վերոնշյալ պահանջներից՝ Հանրային Առողջության Պատասխանատուի Հրամանը **խստորեն հորդորում է**, որ ռեստորանները և սննդի մյուս վայրերը իրենց հաստատությունների փակ տարածքները նախատեսեն այն անձանց համար, որոնք մուտք գործելուց առաջ ի վիճակի են ներկայացնել COVID-19-ի դեմ ամբողջովին պատվաստման ապացույց: Սա չպետք է վերաբերի լավ ծածկող դիմակ կրող անձանց, որոնք ժամանակավորապես մուտք են գործում հաստատության փակ տարածք սահմանափակ նպատակներով, օրինակ՝ առաքում անելու կամ այնտեղից իրեր տանելու, ծառայություն մատուցելու կամ վերանորոգման աշխատանք կատարելու, արտակարգ իրավիճակներում կամ կարգավորող այցի համար, զուգարանից օգտվելու կամ պատվերը վերցնել-տանելու համար:



COVID-19-ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԿԱՄ ԹԵՍԱԿՎՈՐՄԱՆ ՊԱՅԱՆՁ Ընդհանուր Ակնարկ Ծածկ Ունեցող Բիզնեսների Համար



Լրացուցիչ Աղբյուրներ

Խնդրում ենք այցելել հետևյալ կայքերը լրացուցիչ տեղեկությունների համար այն մասին, թե ինչպես համապատասխանել Հանրային Առողջության Պատասխանատուի նոր Հրամանի պահանջներին.

- Ընդհանուր Տեղեկություններ պատվաստման վերաբերյալ և՛ [ինչպես ստեղծել պատվաստման կլինիկա](#)՝ ձեր աշխատավայրում, կարելի է գտնել VaccinateLACounty.com կայքէջում:
- Տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի [COVID-19-ի Դեմ Պատվաստումը Հաստատող Տեսողական Ուղեցույցը](#)՝ մանրամասն տեղեկությունների համար, և քայլ առ քայլ ստուգման հրահանգները պատվաստումների տարբեր փաստաթղթերի նկարներով:
- Տե՛ս Լոս Անջելեսի Շրջանի [COVID-19-ի Թեստի Բացասական Արդյունքը Հաստատող Տեսողական Ուղեցույցի](#) մանրամասն հրահանգները՝ ինչպես ստուգել COVID-19-ի թեստի արդյունքները:
- Տե՛ս [Միջոցառումների Կազմակերպիչների ՀՏՀ-ն](#)՝ Մեզա Միջոցառումների պատվաստման կամ թեստավորման պահանջներին վերաբերող հատուկ հարցերի համար:
- Տե՛ս [Գիշերային Ակումբների, Բարերի, Լաունջերի, Գարեջրատների, Գինեգործարանների և Օղեգործարանների ՀՏՀ-ն](#)՝ այդ բիզնեսների պատվաստման պահանջի վերաբերյալ հատուկ հարցերի համար:

